

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ

ԳՐՈՅ ՀԱՅՅՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Բրիտանական և Ամերիկական Աստուածաշնչի ընկերութիւնները ազգերը քրիստոնէական հաւատի լուսով լուսաւորելու համար Աստուածաշունչը ամեն լեզուներով թարգմանում ատրածում են, գրեթէ ձրիաբար, շատ չնչին գնով: Նպատակը ի հարկ է շատ գովելի է և ձեռնարկած միջոցը նպատակայարմար: Բայց որչափ շատ գովելի նպատակներ իշարն են գործադրվում, և քրիստոնէական սիրոյ աւետարանը պատրուակ բռնած որչափ սոսկալի ատելութիւն և հակառակութիւն են սերմանում Քրիստոսի եկեղեցու մէջ, և դանազան անտեղի առարկութիւններով պլտորում խեղճ ամբոխի միաբը:

Այս տեսակ խռովարարների և ամբոխիչների խումբ կազմում են յիշատակեալ ընկերութեանց գրաւաճառ գործակատարներն ու քարոզիչները, որոնք Աստուծոյ բանը հեթանոսների մէջ քարոզելու և տարածելու փոխանակ՝ 1582 տարիներից հետէ գոյութիւն ունեցող եկեղեցու մէջ պառակտումներ են ձգում՝ առանց խղճահարուելու զրախօսութիւններ յերիւրելով այդ եկեղեցու նուիրականութեանց դէմ, և կարծիքի ենթարկելով մեր երանաշնորհ թարգմանիչների մեզ թողած ամենատուրբ աւանգը—Սուրբ Գրոց անաղարտ և հարազատ թարգմանութիւնը, որ երևելի գիտականներից անգամ՝ զնահատուած է եղել միշտ որպէս ընտիր թարգմանութիւն: Դոքայ այդ քարոզիչներն ու գործակատարները դարուս սկզբից ներս սողոսկելով Առկասեան աշխարհը և օգուտ քաղելով հայերիս անընտրող հիւրասիրութիւնից, որով և ոտքի կռուան հաստատելով՝ չեն խղճահարվում միամիտ գիւղացիների և տգէտ ամբոխի առաջ պախարակել նաև մեր Աստուածաշունչ սուրբ գիրքը ասելով թէ, սխալներ կան մէջը, և իրանց այլանդակ աշխարհաբառ թարգմանութեանց վերայ զրոշմելով «Երբայական և Յունական բնագիրներէն թարգմանուած» մակդիրը՝ վաճառում են թեթեալի, տքնելով գնել ժողովրդի հաւատը և նոցա իրանց ուռկանը ձգելով՝ մայրենի եկեղեցու հակառակ զինել: Բայց տեսնենք այդ քարոզիչներն ու գործակատարները Սուրբ Գրոց ճրայիս թարգմանութիւն են տալիս մեր միամիտ ժողովրդին մեր սեպհական ունեցածը պախարակելուց յետոյ: Եւ

նոցա մեղ տուած « Երրայական և Յունական բնագիրներէն թարգմանուածները » որքան նմանութիւն ունին իրար հետ, որ ապացուցանէ թէ որչափ, հարազատ են այդ Երրայական և Յունական բնագիրներէն թարգմանուածները:

Մեր առաջ գրած է « Երրայական և Յունական բնագիրներէն թարգմանուածների » երկու տեսակը, երկուքն էլ ապա՛ծ Կ. Պօլսում Ա. Յակօր Պօյաճեանի տպարանում, առաջինն Տաճկահայոց բարբառով 1873 թուին, իսկ երկրորդը՝ Արարատեան բարբառով 1883 թ:

Բայ անենք մի որ և է տեղ Երրայական և Յունական բնագիրներից թարգմանուած երկուսի մէջ էլ, որ ի հարկէ բացի երկու բարբառների յատկացեալ ձեւից ուրիշ տարբերութիւն պիտի չունենան:

Երրորդ ընդհանրական թուղթ Յովհաննու գլ. Ա.:

Տաճկահայոց Բարբառով 1873 թ. 1, Երէջէն Գայիոս սիրելիին, որն որ ես կը սիրեմ ճշմարտութեամբ: 2, Սիրելի, աղօթք կընեմ ասիւն իւրիւր յաջողութեան մէջ է, 3, Ինչու որ շատ ուրախացայ, երբ որ ասիւն իւր եղբայրներ եկան, ու քու ճշմարտութեանդ վրայով վկայեցին

Արատ. բարբառով 1883 թ. 1, Երէջէն սիրելի Գայիոսի, որին ես սիրումեմ ճշմարտութիւնով: 2, Սիրելի, աղօթք եմ անում որ ասիւն քանի մէջ յաջող և առողջ լինիս, ինչպէս քո ասիւն յաջող է: 3, Վասն զի շատ ուրախացայ երբոր եղբարքն եկան . . . :

Այս երեք տուն թարգմանութեան տարբերութիւնը.

1873 - ի մէջ

Երէջէն բաց. հոլ.

Կոչիւն, թող բառի տարբերութիւնը, բաց. հոլ.

յաջողութեան մէջ ներգ.

հոգիք

ասիւն իւր եղբայրներ

1883

Երէջէն ուղղ. հոլ.

բանի մէջ, ներգ. հոլ.

յաջող. ուղղ.

անձը, բառին տարբերութիւն.

ասիւն իւր չըկայ

Ահա այս տարբերութիւնները, թէև ըստ երևութին աննշան, բայց ցոյց են տալիս թէ ինչպէս քմահաճոյ թարգմանութիւն են արել յունագէտ և երրայախօս թարգմանիչները: Դնենք նաև մեր Աստուածաշնչից նոյն հատուածը

1. « Յերիցուէ առ Գայիոս սիրելի. զոր ետդ սիրեմ՝ ճշմարտութեամբ:

2. Սիրելի՛ վասն ամենայն իրաց քոյ աջողութեան և առողջութեան՝ աղօթս առնեմ. որպէս է՝ իսկ յաջողութիւն անձինդ քո: 3. Յոյժ ուրախ եղէ ի գալ եղբարց, և լինել վկայ քոյոյ՝ ճշմարտութեանդ:

Բայ անենք մի ուրիշ տեղ.

(Նսայի մարգարէ գլ. 4).

1873 թ.

2. Ո՛վ ոտք հանեց արդարեւ արեւելքէն,

Ու զանիւն իր շաւիղներուն խանչէ,

Ազգերը անոր առջև ըզրաւ,

Ու թագաւորներս իւրոյ (անոր) Կիլիկիոսն քաջ:

1883 թ.

Ո՛վ զարթեցրեց արեւելքից (հարան), որին կաշմեան արդարեւն իւր շաւիղներ:

Նա ազգերը հրդեհ նորա առջևը, և Նա թագաւորներ է նուաճում:

Տարբերութիւնը բառերի և մտքերի կողմից՝ բացայայտ է, և չերկարացնելու համար չենք վերլուծում. միւս կողմից, 1873 թուինը ոտանաւորի ձեռով է զրուած իսկ 1883-ինը ընդարձակի ձեռով. մինչդեռ բնագիրը կամ ոտանաւորի ձեռով է եղել կամ ընդարձակի:

Մեր Աստուածաշնչում նոյն հատուածը:

« 2. Ո՞վ զարթոյց յարեւելից զարդարութիւն և կոչեաց զնա զհեա իւր. երթիցէ և տացէ հատուցումն յանդիման հեթանոսաց, զորհուրեցուցէ զթագաւորս »:

Բաց անենք մի ուրիշ տեղ.

Սաղմ. Խթ. 5.

1873. Թ.

Ինչու վախենամ չար օրերուն  
մէջը,

Երբ որ դարանակալներուն  
անօրէն-նիւնը չըրս իւրս կը  
սլաւէ:

1883 Թ.

Ինչու վախենամ ես չար  
օրերումը, (Թէ) ի՞նչ խորամանկ  
ընթաց-անօրէնութիւնը սլա-  
ւում է ինչ:

Տարբերութիւն

Երբ որ դարանակալներուն

չորս կողմն

(Թէ) իմ խորամանկ թըշ-  
նամուն

ինձ

Մեր Աստուածաշնչից (Սաղմ. Խթ. 6:

Ընդէր բնաւ երկնչիմ ես յաւուր չարի, զի անօրէնութիւնը  
զնացից իմաց շուրջ եղեն զինեւ:

Առաւ. ԻԶ.

1873

8. Յիմարին պարտ- արտա-  
բարակոյտի մը մէջ (պարտ-անան)  
տարեր- թրաք (բնոյն) ին  
նանի:

9. Առանց յիմարին բերան մէջ  
Գինգին յետ-ը հարող խո-նին  
պէս է:

15. Մոյլը իր ձեռքը ամանին  
մէջ կը խօթէ,

(Ո-) Բերանը (անգամ) ար-  
նելու դժուար-նիւն կը դիպայ:

17. Իրենը լեզուս դարս հա-  
մար բարեկացող անցաւորը շունը  
անանջներէն բռնողին (պէս) է:

1883

8. (Ինչպէս որ) տարն էն թրա-  
քս-ը և պարտարեկէ մէջ շար-  
արտ, այնպէս է և յիմարին պար-  
տ-արտ:

9. Արեւածի յետ-ը հարա- խո-  
նը, և առանց յիմարին բերանը:

15. Մոյլը իր ձեռքը կը կո-  
խէ անօթի մէջը, և նարա հա-  
մար դժուար է նորան եր արանել  
էր Բերանը:

17. Մոռնը անանջներէն բռն-  
ան-ը և այն անցաւորը որ գրգռ-  
ված է երանը լեզուս դարս համար:

Տարբերութիւնը ակներև է.

Մեր Աստուածաշնչից (Առակ ԻԶ.)

8. Որ դնէ քար ի պարսառիկս՝ նման է առն՝ որ դնէ պատիւ անմտի: 9. Փշալից լինին ձեռք արեցողի. և ծառայութիւն ի ձեռս անզգամի: 15. Թագունցանէ վատ զձեռս իւր ի ծոց իւրում, և ի բերան իւր դանդաղի տանել: 17. Որպէս որ բուռն հարկանիցէ զշան ձեռոյ, նոյնպէս և մարդ որ անկանի յայլոյ դատաստան:

Եթէ շարունակենք այսպէս, այն ժամանակ հարկ կը լինի ամբողջ Սուրբ Գիրքը երեք օրինակ ընդ օրինակել տարբերութիւններով. ուրեմն իբրև օրինակ այսքանը դնելով և տարբերութիւնները գծելով շատանանք, յաւելցնելով միանգամայն որ ինչպէս ընթերցողները տեսնում են Բրիտանական ընկերութեան հրատարակած Սուրբ Գրոց լեզուն ևս շատ ծանր է և տաղտկալի, մինչդեռ լեզուի գեղեցիկութիւնն ու վսեմութիւնը առաջին նպատից պայմաններն են ընթերցանութեան մէջ յարառելու, իսկ անհարթ լեզուն և նսեմ սճը մարդու վերայ քնեցնող թմրութիւն են բերում:

Բրիտանական և Ամերիկական Աստուածաշնչի ընկերութեանց գործակատարների ջանքը քրիստոնեայ ազգերի միջից եկամուտներ անելու նման է ատոքացած արտորէից մէջ որոմ սերմանելուն, ճշմարիտ առաքելութիւնն է հեթանոսների մէջ ծաւալել քրիստոնէութեան լոյսը. ցանկալի է գիտենալ թէ տարին քանի մահմետական են լուսաւորում քրիստոնէական հաւատոյ լուսով: Առ այժմ՝ այսքան:

Յու սիկ Վարդապետ

